

ՓԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Սույն թվականի ապրիլի 1—2 օրերին Փարիզի հայոց առաջնորդարանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ **տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի** հրավերով և նախագահությամբ գումարվել է խորհրդակցական ժողով, որին իրենց մասնակցությունն են բերել Արևմտյան Եվրոպայի հայրապետական թեմի պատասխանատու հոգևորականները:

Սույն ժողովին հրավիրվել են՝ Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ **տ. Պսակ արքեպ. Թումայանը,** Միլանի հայոց հոգևոր հովիվ **տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը,** Մարսելի հայոց հայրապետական պատվիրակի փոխանորդ **տ. Հակոբ եպս. Վարդանյանը,** Վիեննայի հայոց հոգևոր հովիվ **տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը,** Լիոնի հայոց հոգևոր հովիվ **տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը,** Ժենևի հայոց հոգևոր հովիվ **տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը,** Լոնդոնի հայոց ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ **տ. Արսեն վրդ. Պերպերյանը, տ. Գյուտ ծ. վրդ. Նագաշյանը, տ. Զարեհ վրդ. Թորալյանը, տ. Նորվան վրդ. Զաքարյանը, տ. Պարգև քհն. Սերճանյանը** և **տ. Մեսրոպ քհն. Ժամկոչյանը**՝ Փարիզից, **տ. Աշոտ ավագ քհն. Տեր-Հարությունյանը**՝ հոգևոր հովիվ Մանչեստրի, և **տ. Նարեկ քհն. Վարդանյանը**՝ Վալանսից:

Ժողովի օրակարգի հարցերն են եղել՝

ա) Քննարկում եպիսկոպոսաց ժողովի ծիսական բարեփոխությանց նախագծի.

բ) Եկեղեցական, ծիսական և կարգապահական ընդհանուր հարցեր:

Ժողովի նախագահ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը նախ բոլոր ներկաներին հաղորդում է **Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.** կաթողիկոսի ողջույնի և հաջողության բարեմաղթություններն ու օրհնությունները: Այնուհետև սրբազանն իր զեկուցման մեջ հորդորում է ներկաներին ավելի ուշադրությամբ նվիրվել այն սրբազան գործին, որի պատասխանատվությունն ունեն նրանք:

Ժողովը մասնավոր կարևորությամբ կանգ է առնում յոթ սրբազան խորհուրդների և ժամասացության վրա: Տեղի է ունենում կարծիքների փոխանակում և գնահատական արտահայտություններ՝ պատրաստված ծրագրի վերաբերյալ:

Ժողովի երկրորդ բաժնում քննարկման նյութ են դառնում հոգևոր հովիվների պաշտոնի վերաբերյալ գործնական, կարգապահական, ծիսական և պաշտամունքի խնդիր-

ներ, որոնք իրենց հստակ լուսաբանումն են գտնում Արևմտյան Եվրոպայի հայոց հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի թելադրություններով, ինչպես նաև՝ ներկաների կարծիքների փոխանակությամբ:

Ժողովը լրջորեն զբաղվում է նաև Եվրոպայում ապրող հայ նոր սերնդի կրոնա-բարոյական և ազգային դաստիարակության խնդիրներով:

Ժողովի առաջին օրվա նիստերից հետո բոլոր ժողովականները մասնակցում են Փարիզի հայոց ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հսկումի արարողությանը, հոգեկան բավարարության համար և որպես առիթ խորհրդածության:

Ժողովի ավարտին բոլոր ներկաները ջերմորեն շնորհավորում են Արևմտյան Եվրոպայի հայոց թեմի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանին՝ սույն եկեղեցաշեն, օգտակար ձեռնարկի համար և որոշում են ամեն տարի նույն ժամանակամիջոցին գումարել նման հանդիպում և խորհրդակցություն՝ ի պայծառություն Հայաստանյայց առաքելական եկեղեցու: